



COVID-19-ի դեմ պատվաստում. հաճախ տրվող հարցեր

ԼԻՈՎԻՆ ՊԱՏՎԱՍՏՎԱԾ ԵՎ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆԵՐ

Այս և պատվաստման վերաբերյալ այլ ՋՏՅ-ները առցանց տեսնելու համար այցելեք [COVID-19-ի դեմ պատվաստման կայքէջ](#):

Ի՞նչ է նշանակում COVID-19-ի դեմ պատվաստման «արդիական» կարգավիճակ ունենալ

Դուք ունեք COVID-19-ի դեմ [պատվաստման արդիական կարգավիճակ](#) (կամ՝ ժամանակին պատվաստված լինելու կարգավիճակ) հիմնական շարքի բոլոր առաջարկվող դեղաչափերը և CDC-ի կողմից ձեզ առաջարկվող վերջին խթանիչ դեղաչափը ստանալուց անմիջապես հետո:

Եթե դուք ժամանակին ստացել եք հիմնական շարքի պատվաստումները, բայց դեռ իրավասու չեք ստանալ խթանիչ դեղաչափը, ձեր կարգավիճակը դարձյալ համարվում է արդիական: Սակայն եթե դուք իրավասու եք ստանալ խթանիչ դեղաչափը, ձեր կարգավիճակը չի համարվում արդիական, քանի որ դեռ չեք ստացել խթանիչ դեղաչափը:

Երբ մարդկանց կարգավիճակն արդիական է (ժամանակին ստացել են բոլոր առաջարկվող պատվաստանյութերը), նրանք ունեն լավագույն պաշտպանությունը COVID-19-ով հիվանդանալուց, հիվանդանոցում հայտնվելուց և մահանալուց:

Տե՛ս Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության՝ COVID-19-ի դեմ պատվաստումների ժամանակացույցը ph.lacounty.gov/covidvaccineschedules կայքէջում՝ առաջարկվող բոլոր հիմնական և խթանիչ դեղաչափերի վերաբերյալ տեղեկությունների համար: Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս CDC-ի՝ [ժամանակին ստացեք COVID-19-ի դեմ ձեր պատվաստանյութերը, ներառյալ խթանիչները](#):

Ե՞րբ եմ ես համարվում լիովին պատվաստված

Դուք համարվում եք լիովին պատվաստված պատվաստանյութի հիմնական շարքի բոլոր առաջարկվող դեղաչափերը ստանալուց երկու շաբաթ հետո.

- Դուք ստացել եք COVID-19-ի դեմ Pfizer (COMIRNATY) կամ Moderna (SPIKEVAX) պատվաստանյութի հիմնական շարքի ձեր վերջին դեղաչափը, կամ
- Դուք ստացել եք COVID-19-ի դեմ Johnson & Johnson (J&J)/Janssen պատվաստանյութի միակ դեղաչափը, կամ
- Դուք ստացել եք COVID-19-ի դեմ Novavax պատվաստանյութի 2 դեղաչափերը
- Դուք կլինիկական փորձարկումների շրջանակում ստացել եք COVID-19-ի դեմ [հաստատված արդյունավետություն ունեցող](#) ակտիվ պատվաստանյութի բոլոր առաջարկվող դեղաչափերը (ոչ պլացեբո):

Առաջարկվող բոլոր հիմնական և խթանիչ դեղաչափերի մասին տեղեկությունների համար տե՛ս Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության՝ COVID-19-ի դեմ պատվաստումների ժամանակացույցի կայքէջը՝ ph.lacounty.gov/covidvaccineschedules:

Եթե դուք պատվաստվել եք ԱՄՆ-ից դուրս կամ «միախառնում և համակցում» տարբերակով (երբ դեղաչափերը միևնույն արտադրանքի պատվաստանյութից չեն), այցելեք [ժամանակին ստացեք COVID-19-ի դեմ ձեր պատվաստանյութերը, ներառյալ խթանիչները](#) կայքէջ և ներքևում գտեք համապատասխան բաժին(ներ)ը՝ «Պատվաստում՝ Միացյալ Նահանգներից դուրս» կամ «COVID-19-ի պատվաստանյութերի միախառնում»:



COVID-19-ի դեմ պատվաստում. հաճախ տրվող հարցեր

ԼԻՈՎԻՆ ՊԱՏՎԱՍՏՎԱԾ ԵՎ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆԵՐ

Որո՞նք են լիովին պատվաստված լինելու և արդիական կարգավիճակ ունենալու տարբերությունները

Լիովին պատվաստված արտահայտությունն օգտագործվում է՝ բնորոշելու այն մարդկանց, որոնք ստացել են COVID-19-ի դեմ պատվաստանյութերի հիմնական շարքը: Որոշ դեպքերում պահանջվում է, որ անձը լինի լիովին պատվաստված: Օրինակ՝ լիովին պատվաստված լինելը կարող է պահանջ լինել [այլ երկրներ ճամփորդության](#), աշխատանքի, դպրոց հաճախելու կամ որոշ վայրեր մուտք գործելու համար:

Արդիական կարգավիճակ ունենալը օգտագործվում է՝ բնորոշելու այն մարդկանց, որոնք ստացել են COVID-19-ի դեմ պատվաստանյութերի բոլոր առաջարկվող դեղաչափերը, ներառյալ խթանիչները: Այս մարդիկ ունեն **COVID-19-ի դեմ լավագույն պաշտպանությունը**:

Որտեղի՞ց կարող եմ ձեռք բերել լրացուցիչ տեղեկություններ



- Այս ՅՏՅ-ն կամ COVID-19-ի դեմ պատվաստման այլ թեմաների վերաբերյալ ՅՏՅ-ները տպելու կամ տեսնելու համար սկանավորեք QR ծածկագիրը կամ այցելեք՝ [COVID-19-ի դեմ պատվաստանյութերի ՅՏՅ-ներ](#):
- [VaccinateLACounty.com](#)՝ ներառյալ [COVID-19-ի դեմ պատվաստումների ժամանակագրություն](#), որն աղյուսակներով ցուցադրում է յուրաքանչյուր դեղաչափի ընդունման ժամանակը և տեղեկություններ է տրամադրում այն մասին, թե [ինչպես պատվաստվել](#):
- CDC-ի [COVID-19-ի դեմ պատվաստանյութեր](#) կայքէջ:
- Խոսեք ձեր բժշկի հետ, եթե հարցեր ունեք:

